## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 025 520 (չորս միլիոն քսանհինգ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«ԵՊՀ» հիմնադրամ** | **«ՎԱՌՄ» ՍՊԸ** |
| **ք. Երևան, Ալեք Մանուկյան 1** | **ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43** |
| **«Արդշինբանկ» ՓԲԸ** | **Արդշինբանկ ՓԲԸ** |
| **ՀՎՀՀ 01506928** | **Հ/Հ 2472303727050000** |
| **Հ/Հ 247010000906** | **ՀՎՀՀ 00488698** |
| **պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան** | **տնօրեն՝ Ռ. Առաքելյան** |
| ---------------------------- | ---------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

*Հավելված N 1*
*«01» ապրիլի 2021 թ. կնքված*
*«ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/66» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 79821200/30 | Չափսը՝ A5, էջերի քանակը 114, տպագ. 1+1,<br>թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 732 | 73200 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 3 | 79821200/32 | Չափսը՝ A5, էջերի քանակը 106, տպագ. 1+1, որից 33 էջ՝ գունավոր, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1476 | 147600 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 4 | 79821200/33 | Չափսը՝ A5, էջերի քանակը 516, տպագ. 1+1,<br>թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն)<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 2472 | 370800 | 150 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 5 | 79821200/34 | Չափսը՝ A5, էջերի քանակը 274, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում | հատ | 1229.4 | 122940 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | | | | | | |
| 6 | 79821200/35 | Չափսը՝ A5, էջերի քանակը 240, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1110 | 111000 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |
| 7 | 79821200/36 | Չափսը՝ A5, էջերի քանակը 368, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1500 | 150000 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |
| 8 | 79821200/37 | Չափսը՝ 17x24, էջերի քանակը 130, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 990 | 99000 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 9 | 79821200/38 | Չափսը՝ A5, էջերի քանակը 136, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 816 | 81600 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 10 | 79821200/39 | Չափսը՝ A5, էջերի քանակը 384, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն)<br>կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 2388 | 238800 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ 2021 թ. |
| 11 | 79821200/40 | Չափսը՝ A5, էջերի քանակը 412, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների | հատ | 2148 | 214800 | 100 | ք. Երևան, Ալ. | մայիս- |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն), կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | | | | | Մանուկյան 1 | հունիս 2021 թ. |
| 12 | 79821200/41 | Չափսը՝ A5, էջերի քանակը 156, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 400 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 852 | 85200 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 13 | 79821200/42 | Չափսը՝ A5, էջերի քանակը 156, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն), կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1328.4 | 132840 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 14 | 79821200/43 | Չափսը՝ 17x24, էջերի քանակը 312, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն), կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 2056.8 | 205680 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |
| 15 | 79821200/44 | Չափսը՝ A4, էջերի քանակը 326, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 2525.4 | 252840 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |
| 16 | 79821200/45 | Չափսը՝ 17x24, էջերի քանակը 212, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, | հատ | 1628.4 | 162840 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն),<br>կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | | | | | | |
| 17 | 79821200/46 | Չափսը՝ A5, էջերի քանակը 220, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0,<br>կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1071.6 | 107160 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | մայիս-հունիս 2021 թ. |
| 18 | 79821200/47 | Չափսը՝ A5, էջերի քանակը 96, տպագ. 1+1,<br>որից 2 էջ՝ գունավոր, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 736.8 | 73680 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 19 | 79821200/48 | Չափսը՝ A5, էջերի քանակը 80, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 611.4 | 61140 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |
| 20 | 79821200/49 | Չափսը՝ A4, էջերի քանակը 326, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 2472 | 494400 | 200 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ 2021 թ. |
| 21 | 79821200/50 | A4 տպագրություն միակողմանի - լազերային միակողմանի տպագրություն 4+0, 350 գր/մ թուղթ<br>պատվերը կարող է տեղաբաշխվել տարբեր չափաքանակներով, տարբեր դիզայնով տպագրության ժամկետը՝ 3 օրվա մեջ | հատ | 127.2 | 63600 | 500 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-դեկտեմբեր 2021 թ. |
| 22 | 79821200/51 | Չափսը՝ A5, էջերի քանակը 150, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP | հատ | 792 | 158400 | 200 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Շապիկը՝ կավճապատ 300 գր., (օֆսեթ տպագրություն), անփայլ լամինացիա, տպագր. 4+0, կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:<br>Տպագրվելու է 2 համար՝ յուրաքանչյուրից<br>100 հատ | | | | | | 2021 թ. |
| 23 | 79821200/52 | Չափսը՝ 70 x 100, 1/16<br>Տեքստը՝ 15.7 տպ. մամուլ = 250 էջ<br>Թուղթը՝ օֆսեթ 80 գրամ, տպագրությունը՝ օֆսեթ:<br>Կազմը՝ 300 գմ²., լամինացված, 4 գույն տպագրություն<br>կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ:<br>Տպագրվելու է 3 համար՝ յուրաքանչյուրից<br>100 հատ | հատ | 1400 | 420000 | 300 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ, հուլիս, դեկտեմ բեր 2021 թ. |
| 24 | 79821200/53 | Չափսը՝ 60x84 1/16, էջերի քանակը 368, տպագ. 1+1, թուղթը՝ 80 գր. օֆսեթ, ֆորմաների պատրաստումը՝ CTP<br>Շապիկը՝ N 4, կազմի համար օգտագործվող թուղթը 150 գր. կավճապատ, տպագրություն 4+0, անփայլ լամինացիա, (օֆսեթ տպագրություն), կազմման եղանակը՝ թելակար, ջերմասոսինձ<br>Շապիկի լամինացիան պետք է կատարված լինի անթերի՝ ծալքերի հատվածում բացառելով օդի առկայությունը:<br>Տպագրությունը բարձ որակի (կետայնությամբ): Տպագրության որակի համար տրամադրվում է համանման գրքի նմուշ: | հատ | 1980 | 198000 | 100 | ք. Երևան, Ալ. Մանուկյան 1 | ապրիլ-մայիս 2021 թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ԵՊՀ» հիմնադրամ**
**ք. Երևան, Ալեք Մանուկյան 1**
**«Արդշինբանկ» ՓԲԸ**
**ՀՎՀՀ 01506928**
**Հ/Հ 247010000906**
**պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան**

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՎԱՌՄ» ՍՊԸ**
**ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43**
**Արդշինբանկ ՓԲԸ**
**Հ/Հ 2472303727050000**
**ՀՎՀՀ 00488698**
**տնօրեն՝ Ռ. Առաքելյան**

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*«01» ապրիլի 2021 թ. կնքված*
*«ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/66» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79821200/30 | Երվանդ Օտյան և Լևոն Շանթ ծննդյան 150-ամյակներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի Նյութերի ժողովածու | 36600 | 73200 | 73200 | 73200 | 73200 | 73200 | 73200 | 73200 | 73200 | 73200 |
| 3 | 79821200/32 | **Тигран Симян** Семиотическое пространство Ереванского государственного университета: интерьер и экстерьер (опыт описания) | 73800 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 |
| 4 | 79821200/33 | **Սամվել Մուրադյան** Հայ նոր գրականության պատմություն: Ուսումնական ձեռնարկ | 185400 | 370800 | 370800 | 370800 | 370800 | 370800 | 370800 | 370800 | 370800 | 370800 |
| 5 | 79821200/34 | **Հենզել Մանուչարյան** ԱՐԱՐԱՏԻԶՄ Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում | 61470 | 122940 | 122940 | 122940 | 122940 | 122940 | 122940 | 122940 | 122940 | 122940 |
| 6 | 79821200/35 | **Ն.Կ. Հայրապետյան, Ա.Հ. Թռչունյան** Կենսաքիմիայի վարժություններ և առաջադրանքներ Ուսումնա-մեթոդական ձեռնարկ | 0 | 55500 | 111000 | 111000 | 111000 | 111000 | 111000 | 111000 | 111000 | 111000 |
| 7 | 79821200/36 | **И.К. Манучарян** Типология авянских языков | 0 | 75000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 | 150000 |
| 8 | 79821200/37 | Անձի դիսպոզիցիոնալ գծեր և սոցիալ-մշակութային կողմնորոշումներ. Հոգեչափողական գործիքների տեղայնացում | 49500 | 99000 | 99000 | 99000 | 99000 | 99000 | 99000 | 99000 | 99000 | 99000 |
| 9 | 79821200/38 | **Գալստյան Ն. Ս.** Միջազգային տարածաշրջանագիտության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ | 40800 | 81600 | 81600 | 81600 | 81600 | 81600 | 81600 | 81600 | 81600 | 81600 |
| 10 | 79821200/39 | **Յուրի Ավետիսյան** Հայագիտության զուգահեռականներում | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 | 238800 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 79821200/40 | **Ժենյա Քալանթարյան**<br>Ժամանակների միջով, ժամանակների հետ | 0 | 107400 | 214800 | 214800 | 214800 | 214800 | 214800 | 214800 | 214800 | 214800 |
| 12 | 79821200/41 | **Ամալյա Հարությունյան**<br>Գրական տեքստերը հաղորդակցության միջոց | 42600 | 85200 | 85200 | 85200 | 85200 | 85200 | 85200 | 85200 | 85200 | 85200 |
| 13 | 79821200/42 | **Արման Եղիազարյան**<br>«Սմբատ Բ Տիեզերակալ. թագավոր հայոց | 66420 | 132840 | 132840 | 132840 | 132840 | 132840 | 132840 | 132840 | 132840 | 132840 |
| 14 | 79821200/43 | **Ռոմիկ Հարությունյան, Սերգեյ Գրիգորյան**<br>Հայ քիմիկոսներ, կենսագրական հանրագիտարան | 0 | 102840 | 205680 | 205680 | 205680 | 205680 | 205680 | 205680 | 205680 | 205680 |
| 15 | 79821200/44 | **Ռոբերտ Աղամյան**<br>Անօրգանական քիմիա | 0 | 126420 | 252840 | 252840 | 252840 | 252840 | 252840 | 252840 | 252840 | 252840 |
| 16 | 79821200/45 | **Դավիթ Բաղդասարյան**<br>Էլեկտրականություն և մագնիսականություն | 0 | 81420 | 162840 | 162840 | 162840 | 162840 | 162840 | 162840 | 162840 | 162840 |
| 17 | 79821200/46 | **Վաղարշակ Օհանյան**<br>Մաթեմատիկական անալիզ | 0 | 53580 | 107160 | 107160 | 107160 | 107160 | 107160 | 107160 | 107160 | 107160 |
| 18 | 79821200/47 | **Անի Դաղայան**<br>Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 | 73680 |
| 19 | 79821200/48 | **Ավետիս Ծատուրյան**<br>Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները | 30570 | 61140 | 61140 | 61140 | 61140 | 61140 | 61140 | 61140 | 61140 | 61140 |
| 20 | 79821200/49 | **Ալեքսանդր Սաֆարյան, Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան**<br>Թուրքերենի դասագիրք | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 | 494400 |
| 21 | 79821200/50 | A4 տպագրություն միակողմանի | 7000 | 14000 | 21000 | 28000 | 35000 | 42000 | 49000 | 56000 | 63600 | 63600 |
| 22 | 79821200/51 | **«Արևելագիտության հարցեր»**<br>պարբերական / 2 հատոր | 79200 | 158400 | 158400 | 158400 | 158400 | 158400 | 158400 | 158400 | 158400 | 158400 |
| 23 | 79821200/52 | **Հայագիտության հանդես** / 3 համար | 140000 | 140000 | 140000 | 280000 | 280000 | 280000 | 280000 | 280000 | 420000 | 420000 |
| 24 | 79821200/53 | **Պետրոսյան Գուրգեն**<br>Միջազգային քրեական իրավունք<br>ուսումնական ձեռնարկ | 99000 | 198000 | 198000 | 198000 | 198000 | 198000 | 198000 | 198000 | 198000 | 198000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԵՊՀ» հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԱՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 48, 43
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2472303727050000
ՀՎՀՀ 00488698
տնօրեն՝ Ռ. Առաքելյան

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.